

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԻՆ

Եկեղեցականք-Բնեմականք

Գշ. 2 Ապրիլ.- Աւագ Երեքշաբթի: Ս. Պատարազը մատուցուեցաւ Ս. Յարութեան գաւրի Ս. Յովհաննէս աւետարամչի մատրամ մէջ: Ժամարարն էր Հոգհ. Տ. Ռազմիկի Վրդ. Պողոսեամ, որ ապա Յախագահեց Տանարէն Ըերս կատարուած ուխտաւորաց բափօրին:

Գշ. 4 Ապրիլ.- Աւագ Հիմքաբրի (Յիշատակ ընթրեաց): Առաւոտեան ժամերգութեան աւարտին, Մայր Տանարին մէջ կատարուեցաւ "Կարգ Ապաշխարողաց": Խոկ օրուան համդիսաւոր Ս. Պատարազը՝ Մայր Տանարի Աւագ Սեղանին Վրայ մատոյց Գերշ. Տ. Սեւան Եպս. Ղարիբեան, որ ընթեցաւ Ս. Յովհ. Ուկիերեան Հայրապետի Հաղորդութեան ճառը:

- Կեսօրէ Ետք, Ամեն. Ս. Պատրիարք Հայր Յախագահեց Մայր Տանարին մէջ կատարուած "Ոտնալուայ"ի սրտազրաւ կարգին, որուն աւարտին Ամելիիբան Արեպսը եւս կարդաց Աւետարան Աւագ Խորամի թեմէն, Անգլերէն լեզուով:

Բազմաբի օտար հիւրեր, հիւպատոսներ, ընդ որս եւ Երուսալեմի Քաղաքապետը՝ Վետմ. Թէտի Քոլլէք, լեցուցած էին Տանարի զոյզ դասերը: Մօտ ժամ մը տեսող արարողութիւնը ծայրապուուեցաւ Խորայէլեան ռատիօկայամէն:

- Ժամ մը Ետք, Հոգհ. Տ. Անուշաւան Տ. Վրդ. Զլջանեամի զլխաւորութեամբ, փոքր բափօր մը այցելեց Քրիստոսի աւանդական զոյզ բանտերը — Ս. Հրեշտակապետ եւ Ս. Փրկիչ և այլ Հոգհ. Հայրտուրբը խօսր առնելով՝ բացատրութիւններ տուաւ Հայապատկան զոյզ սրբալյարերու մասին:

- Գիշերը Մայր Տանարին մէջ կատարուեցաւ "խաւարման" տպաւորիչ կարգը, որուն Վերջամասին, խորհրդաւոր մրութեան մէջ, Մայր Հայրենիքն ժամանած Հոգհ. Տ. Սերովը Վրդ. Խախանեան կուռ ու Ծերշնչեալ քարոզ մը խօսեցաւ: Համդիսապետն էր Ամեն. Ս. Պատրիարք Հայրը:

Ուր. 5 Ապրիլ.- Աւագ Ուրբար (Յիշատակ Խաչելութեան): Կեսօրը թիւ անց, Ս. Յարութեան Տանարի մէր Վերմամատրան մէջ պաշտուեցաւ Խաչելութեան կարգը: Համդիսապետն էր Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Պարիկեան:

- Կեսօրէ Ետք, Մայր Տանարին մէջ պաշտուեցաւ Թաղման համդիսաւոր կարգը: Համդիսապետն էր Ամեն. Ս. Պատրիարք Հայրը:

- Շր. 6 Ապրիլ. — Աւագ Շաբաթ (Ճրագալոյց Ս. Զատկիի): Մայր Տանարին մէջ պաշտուած առաւօտեան ժամերգութեան թիւ Ետք, բանի մը վարդապետներ մեկնեցան Ս. Յարութեան Տանար, կատարելու համար դրան բացումը, բանալին առնուելով, ըստ սովորութեան, մէր Աւագ բարգմանին (Հոգհ. Տ. Ռազմիկ Վրդ.) ձեռքէն:

- Երկու ժամեր Ետք, Ամեն. Ս. Պատրիարք Հօր զլխաւորութեամբ, ամբողջ Միաբանութիւնը մեկնեցաւ Ս. Յարութեան Տանար, ուր յաջորդաբար տեղի ունեցան "Լուսաւորեայ"ի եւ յարակից համդիսութիւնները, սկսելով Ս. Գերեզմանի դրան կիրաւմէն: Յունաց բափօրի աւարտին, մէր Եոր Լուսահանը՝ Հոգհ. Տ. Ռազմիկ Վրդ. Պողոսեան, Յունաց Ամեն. Ս. Պատրիարքին հետ, մտաւ Ս. Գերեզման, որուն բովածի բացուածքներէն բանի մը վայրկան Ետք դուրս պիտի զար նուիրական լոյսը, լուսակիրներու կողմէ ամենիշապէս փոխադրուելու համար վերեատան մէր պատշգամին մէջ իր տեղը գրաւած Ամեն. Ս. Պատրիարք Հօր: Ս. Գերեզմանին շուրջ կը կազմուի բափօր, զլխաւորութեամբ բացառաբար եափսկոպոսական խոյր կրող Լուսահան վարդապետին, Երիցս դառնալով սրբավայրին շուրջ: Ղպտիներ եւ Ասորիներ եւս կը հետեւին մէր բափօրին: Յունական եւ հայկական զանգերն ու կոչնակները Երկարութեն ու զուարբազին կը դոյանցէին: Վաճք դարձին, Դաւիթի Եերդին զիմաց, Պատրիարք Սրբազնը եւ Լուսահան վարդապետը զգեստաւորուեցան, եւ բափօրականը յարութեան շարականներ Երգելով ուղղուեցան Մայր Տանար, ուր Սրբազն Պատրիարքը Ս. Զատկի շնորհաւորական մալբանով արձակեց մողովուրդը:

Ժամ մը Ետք, Մայր Տանարին մէջ սկսաւ ճրագալոյցի կարգը, որուն աւարտին Աւագ Սեղանին Վրայ պատարազեց եւ Յարութեան Խորհուրդին շուրջ բարողեց Մայր Հայրենիքն ժամանած Հոգհ. Տ. Միքայէլ Վրդ. Աջապահեանը: Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Յախագահեց Ս. Զատկի նախատօնակին, որմէ Ետք, "Այսօր յարեաւ" շարականը Երգելով, Միաբանութիւնը զգեստաւորեալ բարձրացաւ վանքի սեղանատումը՝ ընթրիին: Սեղանին Վրայ կ'ե-

թեւք տօմին յատուկ ներկուած հաւկի-
բ:

- Կիր. 7 Ապրիլ.- ԶԱՏԻԿ ՅԱՐՈՒԹԵԱՆ
ՏԵԱՌՆ: Կես զիշերէն երկու ժամեր եռք,
Մայրավանքի մեծ զամգը հնչեց և թիշ
եռք, Գերշ. Տ. Կիւրեղ Եպս.ի զլխաւո-
րութեամբ, Միաբանութիւնը իջաւ Ս.
Յարութեան Տաճար, ուր ժամերգութեան
մէկ մասը մեր Վերանատան մէջ կատարելէ
եռք, Յունաց Պատարազի աւարտին, իջաւ
Ս. Գերեզմանի շրջափակը, բափօրական
զնացը շարունակելու համար մնացեա-
լը: Ղպտիմեր եւ Ասորիմեր եւս կը
հետեւեին մեր բափօրին, որ տեսց
միջչեւ լուսաբաց: - Կարճ դադարէ մը
եռք, Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. յատոյց
օրուան հանդիսաւոր Ս. Պատարազը Քրիս-
տոսի Ս. Գերեզմանին վրայ եւ տպաւորիչ
բարոզով մը պանձացուց Յարութեան խոր-
հուրդը: Ներկայ էր Ամեն. Ս. Պատրիարքը
Հայրը: Վանք Վերադարձին, Հայոց բաղի
մուտքեն, Միաբանութիւն և աշակերտու-
թիւն երգեցողութեամբ յառաջացան եւ
բարձրացան Պատրիարքաբան:

- Կևորէ եռք, Մայրավանքի մեծ
բակին մէջ կատարուեցաւ Զատկական մեծ
"Անդաստան"՝ հանդիսապետութեամբ Ամեն.
Ս. Պատրիարք Հօր:

Բշ. 8 Ապրիլ .- Բ. օր Ս. Զատկի
(Ֆիշատակ մեռելոց): Օրուան հանդիսա-
ւոր Ս. Պատարազը՝ Մայր Տաճարի Աւագ
Սեղամին վրայ յատոյց, Յարութեան իմաս-
տին ու կարեւորութեան շուրջ կուռ
բարոզ մը խոսեցաւ եւ, Ս. Պատարազէն
եռք, Մայր Տաճարին մէջ կատարուած
մեծահանդէն բափօրին - ամպիովանիի տակ
եւ կենաց փայտի մասունքն ի ձեռին -
նախազահեց Ամեն. Ս. Պատրիարքը Հայրը:
Յետոյ Միաբանութիւն եւ ժողովուրդ
շարականի երգեցողութեամբ բարձրացան
Պատրիարքաբան, ուր Պատրիարքը Հայրը
շնորհաւորեց բոլորին Ս. Զատկին եւ
օրինուած Ցշխար բաժնեց ամենուն:

- Բշ. 9 Ապրիլ .- Գ. օր Զատկի: Ս.
Պատարազը՝ Մայր Տաճարի Ս. Գլխադրի
մատրան մէջ յատոյց Հոգշ. Տ. Մերովիտ
Վրդ.: Ամեն. Ս. Պատրիարքը Հայրը նախա-
զահեց հոգեհանգստեան պաշտամութիւն:

Եր. 13 Ապրիլ.- Գլխատումն Յովի.
Կարապետին: Ս. Պատարազը մատուցուեցաւ
Մայր Տաճարի Աւագ Խօրամին վրայ:
Ժամարան էր Հոգշ. Տ. Մերով Վրդ.
Ասոլիւան: Կատարուեցաւ Զեռնդրութիւն
Սարկաւազաց:

- Կիր. 14 Ապրիլ .- Նոր Կիրակի
(Կրկնազատիկ): Ըստ սովորութեան, Մայր
Տաճարի Աւագ Սեղամին վրայ պատարազէց
Լուսահանք՝ Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պո-
ղոսեան: Պատարազի մէկ մասը ձայնա-
սփոռուեցաւ Խորայէլեան ուատիօկայանիւն: Քարոզեց Ամեն. Ս. Պատրիարքը Հայրը
(Անել Ամզլերէնով): Ապա նախազահեց
օրուան յատուկ "վասն բիւրաւոր նահա-
տակացն մերոց" կատարուած համգստեան
կարգին:

- Ուր. 19 Ապրիլ.- Նախատօնակին ի
Ս. Յակոբ Յախազահեց Գերշ. Տ. Սեւան
Եպս. Ղարիպեան:

- Եր. 20 Ապրիլ.- Աւետումն Ս.
Աստուածածին: Առաւօտուն, Գերշ. Տ. Ս.
Սեւան Եպս.ի զլխաւորութեամբ, Միաբան
Հայրէր ինքնաշարժերով իջան Գերմեմա-
նիի ծորը ու "Հրաշափառ"ով մուտք գոր-
ծեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր
Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան
հանդիսաւոր Ս. Պատարազը մատոյց Գերշ.
Համդիսապետ Սրբազնաբ:

Կևորէ եռք, Լուսարարապետ Գերշ.
Տ. Դաւիթ Եպս.ի զլխաւորութեամբ, Միա-
բանութիւնը "Հրաշափառ"ով մուտք գոր-
ծեց Ս. Յարութեան Տաճար, ուր մեր Վերեամատրան մէջ պաշտուեցան ժամեր-
գութիւնն ու նախատօնակին: Ապա կատար-
ուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցե-
լութեան հանդիսաւոր բափօր Տաճարէն
ներս: Պատրիարքապետ էր Հոգշ. Տ. Գուսան
Վրդ. Ալենանեան:

- Կիր. 21 Ապրիլ.- Աշխարհմատրան
(Կանաչ Կիրակի): Գիշերային և առա-
ւոտեան ժամերգութիւնները պաշտուեցան
ի Ս. Յարութիւն, մեր Վերեամատրան մէջ: Ապա, Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ
Եպս. Սահական մատոյց օրուան հանդի-
սաւոր Ս. Պատարազը՝ Քրիստոսի Ս.
Գերեզմանին վրայ, բարոզեց՝ բացարե-
լով զոյց կոչումները այս Կիրակին, և
նախազահեց Սրբավայրին առջև
կատարուած Անդաստանին, որով աւարտե-
ցան Զատկական շրջանի Հայկական եւ ոչ-
Հայկական բոլոր հանդիսութիւնները յիշ-
եալ Տաճարէն ներս:

Եր. 27 Ապրիլ.- Ս. Պատարազը մա-
տուցուեցաւ ի Ս. Գլխադրի: Ժամարան
էր Հոգշ. Տ. Միքայէլ Վրդ. Աշապահեան:

Կիր. 28 Ապրիլ.- Ս. Պատարազը մա-
տուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր Վեր-
եամատրան մատրան մէջ: Ժամարան էր Հոգշ.
Տ. Անուշաւան Վրդ. Զդշանեան:

Եր. 4 Մայիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգ. Տ. Վամիկ Վրդ. Մամիկոնյան:

- Կիր. 5 Մայիս.- Տօֆ Երևան մ. Ս. Խաչին (351): Առաւոտեամ ժամերգութեան ընթացքին, Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Եպս. կատարեց ընթերցումը Ս. Կիւրեղ Հայրապետի Կոստանդ Կայսեր յղած Թուղթին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւազ Սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգ. Տ. Դաւիթ Վրդ. Հայրապետին: Աւազ Խորամին վրայ կը տեսնուէր վառ կաթեղեղ Երբով զարդարուն Ս. Խաչին Եշանը:

- Եր. 11 Մայիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգ. Տ. Բագրատ Արդ. Պուրեներեան:

- Կիր. 12 Մայիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերմամտրան մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Ռուբեն Վրդ. Յովակիմեան:

- Դշ. 15 Մայիս.- Կեսօրէ Ետք, Լուսարապետ Գերշ. Տ. Դաւիթ Եպս. Գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժերով բարձրացան Զիրենեաց լեռ, ուր Համբարձման Սրբավայրին վրայ կառուցուած մեր վրանամատրան մէջ կատարուեցան ժամերգութիւն և Յախատօնակ եւ, կարն ընդհատումէ մը Ետք՝ Հովում եւ զիշերային ու առաւոտեամ ժամերգութիւններ:

- Եշ. 16 Մայիս.- ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ ՏԵԱԽԻՆ: Առաւոտուն, Ամեն. Ս. Պատրիարքը Հօր Գլխաւորութեամբ, Միաբանութիւնը ինքնաշարժերով բարձրացան Զիրենեաց լեռ, ուր յետ "Հրաշափառով մուտքի, օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մեր վրանամատրան մէջ մատոյց Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարիկեան: Մայր Աբովյան Սիսէն Ս. Էջմիածին Գիշադրութեան 550րդ տարեդարձին գիշադրութեան 550րդ տարեդարձին առթիւ կատարուած "Հայրապետատական Մաղթանք"ին Յախագահեց Ամեն. Ս. Պատրիարքը Հայրը: Խոկ Ս. Պատարագէն Ետք, Սրբավայրին առջեւ կատարուած "Ամդաստամ"ին Յախագահեց Գերշ. Պատարագին Սրբավանք:

- Կեսօրէ Ետք, Մայր Տաճարին մէջ եւս կատարուեցան "Ամդաստամ": Համեյսապետն էր Գերշ. Տ. Աւեան Եպս. Ղարիպեան:

- Եր. 18 Մայիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Համբարձում Վերին մատրան մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Կոմիտաս Վրդ. Շերպեթեան:

Կիր. 19 Մայիս.- Երկրորդ Մաղկա-

գարդ: Ս. Հրեշտակապետաց Եկեղեցւոյ շարունակուող նորոգութիւններուն պատճառաւ, Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Ս. Աստուածածնայ Խորամին վրայ: Ժամարարն էր Հոգ. Տ. Գուսան Վրդ. Ալեամեան:

Եր. 25 Մայիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Առաքելոց Վերին մատուցում մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Ռազմիկ Վրդ. Պողոսեան:

Հոգեգալստեամ հանդիսաւոր Յախագահին ի Ս. Յակոբ Յախագահեց Ամեն. Ս. Պատրիարքը Հայրը:

- Իրկեկադիմին, Մայր Տաճարին մէջ պաշտուած "Եկեղեցի" և Հոկման կարգերուն Յախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Եպս. Սահակեան:

Կիր. 26 Մայիս.- ՀՕԳԵԳԱԼՈՒՍ (Բարեկեթան Եղիշան պահոց): Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Մայր Տաճարի Աւազ Սեղանին վրայ մատոյց և Յովի. Ռոկերեանի Հոգեգալստեամ Անքողը աշխարհաբարով կարդաց Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Եպս. Սահակեան:

- Կեսօրէ Ետք, Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Յախագահեց Մայր Տաճարին մէջ կատարուած "Ամդաստամ"ին, որմէ Ետք Հոգ. Հայրեր, Գերշ. Տ. Աւեան Եպս. Գլխաւորութեամբ, մեկնեցան Սիսէն լեռ, կատարելու համար, ըստ ընկալեալ սովորութեան, Վերջին Ըսրեաց Վերմատան մէջ մասնաւոր արարողութիւն: Դուռը փակ գտնելով՝ դարձան Ս. Փրկիչ, որու Յախագահիթին մէջ հոգեհանգստեան պաշտօն կատարեցին հոն բաղուած Ս. Աբովյան հանգուցեալ Պատրիարքաց հոգիներուն համար: Հոգեհանգստ կատարուեցաւ Յանե ազգ. գերնամանատան վարդապետաց Հիրիմաներու յատկանիշերուն եւ գերազանց դերի ու գօրութեան մասին:

- Ֆիշեալ ոխտագնացութիւնը կատարուեցաւ Զորեցարքի, 29 Մայիսի կեսօրէ Ետք: Տեղի ունեցաւ լման Երեկոյեան ժամերգութիւն, Յախագահութեամբ Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Եպս. ի, որ խոսեցաւ Յանե Ս. Հովույ յատկանիշերուն եւ գերազանց դերի ու գօրութեան մասին:

- Եր. 1 Յունիս.- Է. օր Հոգեգալստեամ: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգ. Տ. Աւետիս Արդ. Իփրանեան:

Կիր. 2 Յունիս Ֆիշատակ Եղիշայի մարգարէին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերմանատրան մէջ:

Պատարագեց եւ բարողեց Հոգշ. Տ. Անուշաւան Ռ. Վրդ. Զզշանեան, Ծիւթ ու Անժանով Եղիա Մարգարէի Կեամքն ու հրաշագործութիւնները:

- Ա. Հրեշտակապետաց Եկեղեցւոյ նորոգութեամց պատճառաւ, այս տարի Եւս զանց առնուցամ Ա. Հափիսիմեանց նախատօնակին ու Պատարագը:

Ուր. 7 Յունիս.- Նախատօնակին ի Ա. Յակոր նախագահեց Գերշ. Տ. Կիւրեղ Եպս.:

Եր. 8 Յունիս.- Ա. Գրիգորի Լուսաւորչին Ելմ ի Վիրապէն: Ա. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տանարի աւանդատան Ա. Լուսաւորչի սեղամին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Վամիկ Վրդ. Մանկասարեան:

Նախատօնակին ի Ա. Յակոր նախագահեց Ամեն. Ա. Պատրիարք Հայրը: Ապա ծնրադիր "Տէր Ողորմեա" երգուեցաւ:

Կիր. 9 Յունիս.- Տօն Կաբուղիկէ Եկեղեցւոյ Ա. Էջմիածնի: Մայր Տանարի Աւագ Սեղամին վրայ պատարագեց Հոգշ. Տ. Համբարձում Վրդ. Քէշիշէան: "Հայրապետական Մարքարէին նախագահեց Ամեն. Ա. Պատրիարք Հայրը:

- Եր. 15 Յունիս.- Ա. Մեծին Ներսիսի եւ Խադայ Եպս.ին: Ա. Պատարագը մատուցուեցաւ ի Ա. Գլուխոյի: Ժամարարն էր Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ. Տէրպէրենան:

Կիր. 16 Յունիս.- Բարեկենման Ա. Լուսաւորչի պահոց: Ա. Պատարագը մատուցուեցաւ ի Ա. Յարութիւն, մեր Վերնատան մատրան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան, որ նաև քաղողեց աղօրքի կարևորութեան եւ գօրութեան մասին:

Ուր. 21 Յունիս.- Նախատօնակին ի Ա. Յակոր նախագահեց Գերշ. Տ. Սեւան Եպս.:

Եր. 22 Յունիս.- Գիւտ Նշխարաց Ա. Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին: Ա. Պատարագը մատուցուեցաւ, ըստ սովորութեան, Մայր Տանարի Ա. Մակարայ մատրան մէջ, ուր բաղուած է, ըստ աւանդութեան, Ա. Լուսաւորչի մասունքը: Ժամարարն էր Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ. Տէրպէրենան:

Կիր. 23 Յունիս.- Ա. Պատարագը մատուցուեցաւ բաղարիս Հրէական բաժնին մէջ գտնուող Ա. Գրիգոր Լուսաւորչի Եկեղեցւոյ մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Կուսան Վրդ. Ալեանեան: Քարոզեց Լուսարարապետ եւ հանդիսապետ Գերշ. Տ. Դաւիթ Եպս. Սահակեան:

Դշ. 26 Յունիս.- Թարգմանչաց Նախատօնակին ի Ա. Յակոր նախագահեց Ա. Թարգմանչաց Վարժարանի Տեսուչը՝ Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գրքիկեան:

Եշ. 27 Յունիս.- Ա. Թարգմանչաց Վարդապետացմ մերոց Սահակայ եւ Մեսրոպայ (Տօն ազգային): Մայր Տանարի Աւագ Սեղամին վրայ պատարագեց Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պողոսեան:

Եր. 29 Յունիս.- Ա. Տրդատայ թագաւորին եւ Աշխէն տիկնոջն: Ա. Պատարագը մատուցուեցաւ ի Ա. Գլուխոյի: Ժամարարն էր Հոգշ. Տ. Վամիկ Վրդ. Մանկասարեան:

Նախատօնակին ի Ա. Յակոր նախագահեց Գերշ. Տ. Սեւան Եպս. Ղարիպեան:

Կիր. 30 Յունիս.- Գիւտ Տիգոյ Ա. Աստուածածին: Ա. Պատարագը մատուցուեցաւ ի Ա. Աշծածին (Գերսեմանի ծոր): Ժամարարն էր Հոգշ. Տ. Մեսրոպ Վրդ. Ասողլեան: Քարոզեց Հոգշ. Տ. Բարսեղ Վրդ. Գալամտէրեան մեկնարանելով օրուան նաշու Աւետարանին որումներու առակը: Երբուդարձի թափօրմերը գլխաւորեց Գերշ. Տ. Սեւան Եպս.:

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

Գշ. 2 Ապրիլ.- Մայր Արոն Ա. Էջմիածնի Միաբանութեան անդամներէն Հոգշ. Տ. Մերովք Վրդ. Խախանեան եւ Հոգշ. Տ. Միքայէլ Վրդ. Ազապահեան Զատկական տօմերու առքի ժամանեցին Ա. Արոն, և մնացին մինչեւ 28 Ապրիլի կիրակի օրը:

- Բշ. 8 Ապրիլ.- Երեկոյեան, Ամերիկայի Եպիսկոպոսական Եկեղեցւոյ նախագահող Եպիսկոպոսը, Պրատունիմի եւ տեղւոյս Ամելիքան Արքեպս. Քաֆիրի ըմբիրի իրաւութեան էմ Պատրիարքարան:

Գշ. 9 Ապրիլ.- Երեկոյեան, ընդառաջելով Ամելիքան Արքեպս.ի իրաւութիւն, Ամեն. Ա. Պատրիարք Հայրը եւ Գերշ. Լուսարարապետ Տ. Դաւիթ Եպս. Յ. Ա. Պատարագը մասնակցելու տեղւոյս Ամելիքան Եկեղեցւոյ 150 ամեակի եածկերոյթին:

Եր. 13 Ապրիլ.- Միւնիիի (Գերմանիա) Կարտինալ Ռեքրէր, իր օգնական Եպիսկոպոսին եւ Ռէկէմսպուրկի Արեւելեան Եկեղեցիներու յատուկ Հիմնարկի պատասխանատու Մօմէնիօր Ռաուշ Շերկայ Եղան Մայր Տանարի մէջ մատուցուած Պատարագին եւ կատարուած Սարկաւագական ձեռնադրութեան, եւ ապա բարձրացան Պատ-